# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

N 016/83
*23 մարտ 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 24-Ա, 25-Ա, 26-Ա, 27-Ա, 28-Ա, 29-Ա, 30-Ա որոշումները:

Առդիր՝ 7 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2018թվականի N 24-Ա

### 06-023-0001-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ,ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Բազում համայնքի 06-023-0001-0005 ծածկագրի տակ գտնվող 0,2443 հա հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և ճանաչել Հայկանուշ Պավլուշի Նիկողոսյանի /ծնված 1957թ/ սեփականության իրավունքը 0.2443 հա հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել 06-023-0001-0005 ծածկագրի տակ գտնվող 0.2443հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք 1985 թվականին կառուցված 189.16 քմ բնակելի տան նկատմամբ Հայկանուշ Պավլուշի Նիկողոսյանի /ծնված 1957թ/ սեփականության իրավունքը:
3. Հողամասի վրա առկա է 18.37 քմ ինքնակամ կիսակառույց:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Բազում համայնք, 1 փողոց ,41 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2018թվականի N 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

Ուժը կորցրած ճանաչել Բազում համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարիանի 28 -ի <<Անշարժ գույքի նկատմամբ Արամ և Ռազմիկ Կստանդյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու, փոստային հասցե տրամադրելու մասին>> թիվ 15-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2018թվականի N 26-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռու մարզպետի 14.03.2018 թվականի թիվ 101/111.4/1471-18 գրությամբ տրված համաձայնությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Բազում համայնքի 06-023-0055-0001 կադաստրային ծածկագրով 0.0606 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2018թվականի N 27-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄ ԵՎ ՌԱԶՄԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ա. Կոստանդյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքը, հողամասի և շենք շինությունների հատակագծերը, ղեկավարվելով ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60 և 64 հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի վարչական տարածքի 06-023-0055-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,0606հա հողամասի և այդ հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 2001թ. կառուցված 61,29քմ բնակելի տան և 17,01քմ մառանի նկատմամբ վերականգնել և ճանաչել Արամ Ռաժդենի Կոստանդյանի /ծնված 09.03.1965թ./ և Ռազմիկ Արամի Կոստանդյանի /ծնված 10.08>1989թ>/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 8 փողոց 1 նրբանցք թիվ 4:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՐՏԻ 2018թվականի N 28-Ա

### ՎԱԳՈՆ ՏՆԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բազում համայնքի բնակիչ Վրեժ Ավագյանի դիմումը, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 66-Ն որոշման հավելվածի 1-ին մասի <<բ>> կետի պահանջները, ղեկավարվելով , <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ

Բազում համայնքի բնակիչ Վրեժ Ավագյանին թույլատրել իր սեփական տնամերձ հողամասում շարժական վագոն տնակ տեղադրելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 29-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 22-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ

Ուժը կորցրած ճանաչել Բազում համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 15-ի <<06-023-0059-0003-ծածկագրի տակ գտնվող հողամասի նկատմամբ Սերգեյ Ալեքսեյի Առաքելյանի և Վիոլետա Վոլոդյայի Առաքելյանի իրավունքները վերականգնելու մասին>> թիվ 22-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 30-Ա

### 06-023-0059-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ս. Առաքելյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991թ. թիվ 2 որոշումը, ՄԵԼ ԵՎ ՄԻԼ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, համայնքի ժամանակավոր տնտեսությունների գիրքը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. թիվ 186-Ն հրամանով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-023-0059-0003 ծածկագրի տակ գտնվող 0,1073հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի նկատմամբ Սերգեյ Ալեքսեյի Առաքելյանի /ծնված 1956թ./ և Վիոլետա Վոլոդյայի Առաքելյանի /ծնված 1958թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված 0,1հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0,0073հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Սերգեյ Ալեքսեյի Առաքելյանի և Վիոլետա Վոլոդյայի Առաքելյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ Բազում 5-րդ փողոց թիվ 33:
6. Ուժը կորցրած ժանաչել համայնքի ղեկավարի կողմից հաստատված և նախկին ներկայացված բոլոր որոշումները:
7. Կադաստրային քարտեզում պետական գրանցման ներկայացված հողամասը սխալմամբ քարտեզագրված է որպես անհայտ սեփականատիրոջ պատկանող հողամաս, այնինչ նշված հողամասը փաստացի սեփականաշնորհման որոշմամբ հատկացված է վերը նշված քաղաքացիներին, որոնք և հատկացման օրվանից տիրապետում, տնօրինում և օգտագործում են իրենց հողամասը, և նշված հողամասի համար կատարում են իրենց հարկային պարտավորությունները, ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. թիվ 186-Ն հրամանի դրույթներով կատարել կադաստրային քարտեզում սխալի ուղղում և իրավունքի պետական գրանցում իրականացնել 0,1073հա մակերեսով հողամասի նկատմամբ Սերգեյ Ալեքսեյի Առաքելյանի և Վիոլետա Վոլոդյայի Առաքելյանի անվամբ:
8. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԲՐՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ